ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 սեպտեմբերի 2023 թվականի N 21-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությունը՝ ո ր ո շ ու մ ե մ.

1. Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահի նախաձեռնությամբ 2023 թվականի սեպտեմբերի 22-ին՝ ժամը 12:00-ին, գումարել Հանրային հեռարձակողի խորհրդի նիստ, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեում գտնվող իր գործունեության վայրում:
2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված՝ Հանրային հեռարձակողի խորհրդի նիստը գումարել հետևյալ օրակարգով.

1. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գույքի շուկայական արժեքի սահմանման համար անկախ գնահատողի ծառայություններից օգտվելու մասին հարցը:
2. Հանրային հեռարձակողի խորհրդի 2023 թվականի օգոստոսի 23-ի № 55-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

19 սեպտեմբեր, 2023 թվական
ք. Երևան